ԳԼՈՒԽ ՆԴ.

Ամենայն մարդ կարող է տնկել ծառ 'ի դաշտի պռուկն ճանապարհաց 'ի յերեսս յերկրի տէրունի, զամենայն զոր ինչ պտուղ և եկամուտ ելցէ 'ի ծառոց ստանայցէ տնկողն հատուցանելով տասանորդն 'ի տունն հայոց։

ԳԼՈՒԽ ՆԵ.

Ամենայն մարդ ունի արձակութիւն ծախիւք իւրօք կազմել կարմունջս 'ի վերայ գետոց և 'ի վերայ աղտատուկ տղմի 'ի նմայ տացէ տունն հայոց նամակ հարկապահանջութեան 12 ամաց ժամանակաւ որ հաւաքէ 'ի անցաւորաց կարմնջէ այսինքն.

մարդն ձիաւոր . .	2 լման
մարդ և կին հետևակ .	1 լման
բեռն ձիոյ, ջորոյ, իշոյ, եղան և ըղտոյ. . . .	2 լման
կառն	4 լման
մարդ և թէ կին 'ի վերայ իւրեանց բեռնաւն. . .	1 լման

Եւ միջոց երկոտասան ամաց շինող կարմնջին ծախիւք իւրօք հոգասցէ նորոգումն, յետ լրումն երկոտասան ամաց կարմունջն մնասցէ